Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 5

N ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան <<16 >>. <<10 >>. 2025թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարո Շահվերդյանի, հիմք ընդունելով 14.02.2025 թվականին կնքված **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի վճարման կարգը**

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **20 000 000** (քսան միլիոն) ՀՀ դրամ գումարին ավելացնել ևս **12 360 000** (տասներկու միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի **66 660 000** (վաթսունվեց միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

1.3 Համաձայնագրի պայմանները կիրառվում են նաև պայմանագիրը կնքելուց հետո մինչև սույն համաձայնագրի կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| **ՀՀ ներքին գործերի նախարարություն** | **ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ** |
| **ք. Երևան, Նալբանդյան 130** | **հասցե՝ ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ., շենք 2** |
| **ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** | **Բանկ՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ, «Բաղրամյան» մ/ճ** |
| **Հ/Հ** *900011042471* | **Հ/Հ** 11813017106900 |
| **ՀՎՀՀ** *02882913* | **ՀՎՀՀ** 00886932 |
| **Հեռ.** 010 59-61-52 | **Հեռ.** 012 27 27 27 |
| **Էլ. հասցեն՝** gnumner@mia.gov.am | **Էլ. Փոստ:** addictions.arm@gmail.com |
| ______ **Ա. Ֆիդանյան** | ______ **Կ. Շահվերդյան** |
| /ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/ | (ստորագրություն) |

*Հավելված N 1*
*<<16>> 10 2025թ.*
*ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48 ծածկագրով գնման պայմանագրի*

**Վճարման ժամանակացույց**

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 85111120/1 | Հիվանդանոցների կողմից մատուցվող բժշկական ծառայություններ | | | | | | | | | | 12 360 000 | 12 360 000 | 12 360 000 | **12 360 000** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011042471**
**ՀՎՀՀ 02882913**
**Հեռ. 010 59-61-52**
**Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**

**Ա. Ֆիդանյան**
**/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ**
**հասցե՝ ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ., շենք 2**
**Բանկ՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ, «Բաղրամյան» մ/ճ**
**Հ/Հ 11813017106900**
**ՀՎՀՀ 00886932**
**Հեռ: 012 27 27 27**
**Էլ. Փոստ: addictions.arm@gmail.com**

**Կ. Շահվերդյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ)**